



COMMISSIONER FOR HUMAN RIGHTS

COUNCIL OF EUROPE



CommDH(2008)29

Ստրասբուրգ, սեպտեմբերի 29, 2008թ.

Ոչ պաշտոնական թարգմանությունը  
պաշտոնականը՝ անգլերեն

## ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հեղինակ՝ Թոմաս Համարբերգ  
Եվրոպայի խորհրդի  
Մարդու իրավունքների հանձնակատար

Երևան  
Հուլիսի 13-ից 15-ը, 2008թ.

## Ներածություն

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը Հայաստան է այցելել 2008թ. հունիսի 13-ից 15-ը: Հատուկ առաքելությունը կազմակերպվել էր Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) կողմից 2008թ. հունիսի 25-ին Թիվ 1620 (2008) բանաձևի ընդունումից հետո, որը Հանձնակատարին հրավիրել էր.

- նպաստել Ազգային ժողովի՝ 2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունները հետաքննող հանձնաժողովի (այսուհետ՝ հետաքննող հանձնաժողով) աշխատանքին միջազգային փորձագետների մասնակցությամբ՝ խնդրո առարկա մարմնի կողմից անկախության, թափանցիկության և վստահելիության պայմանների բավարարման դեպքում, և
- ԵԽՄԿ Մոնիտորինգի հանձնաժողովի 2008թ. սեպտեմբերի 11-ի հանդիպմանը տեղեկացնել հետաքննող հանձնաժողովին առնչվող առաջընթացի, ինչպես նաև 2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների առնչությամբ ազատագրված անձանց ազատ արձակման գործընթացի վերաբերյալ:

Ստորև ամփոփ ներկայացվում են 2008թ. սեպտեմբերի 11-ին ԵԽՄԿ Մոնիտորինգի հանձնաժողովին Հանձնակատարի ներկայացրած եզրակացությունները:

### **2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների առնչությամբ ազատագրված անձինք**

1. Մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների առնչությամբ ազատագրված անձանց իրադրությունը դեռևս շարունակում է խիստ մտահոգությունների տեղիք տալ: Անհետաձգելի է լուծումներ գտնելու համար պարտադիր քաղաքական կամքի կիրառման անհրաժեշտությունը:
2. 2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձություններին առնչվող բոլոր քրեական գործերի նախնական հետաքննության փուլն ավարտված է: Գործերի մեծ մասը ուղարկվել են դատարաններ, իսկ ներգրավված անձանց ճնշող մեծամասնությունը, որոնցից գրեթե բոլորը ընդդիմության սատարողներ են, մեղավոր են ճանաչվել և դատապարտվել: Ներկայում յոթ անձինք գտնվում են նախնական կալանքի տակ, 14 կալանավորված անձանց առնչվող դատավարությունները ընթացքում են, և 39 անձինք դատապարտվել են ազատագրվման: Շուրջ 42 անձինք հիմնականում արագ դատավարական ընթացակարգով դատապարտվել են ազատագրվում չենթադրող պատժամիջոցների, այն է՝ պայմանական ազատում կամ տուգանքներ:
3. Հանձնակատարը գտնում է, որ լուրջ խնդիրներ կան մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների առնչությամբ ազատագրված անձանց դեմ ներկայացված քրեական մեղադրանքների բնույթի վերաբերյալ: Մասնավորապես, Հատուկ քննչական ծառայության պետի՝ 2008թ. մարտի սկզբին որոշ մարզային դատախազներին ուղղած նամակը, որով նա պահանջում է տեղեկատվություն հավաքել ընդդիմության ցույցերի մասնակիցների, այլ ոչ կոնկրետ գործողությունների վերաբերյալ, հարցեր է առաջացնում հետաքննության բնույթի և նպատակի վերաբերյալ:

Հանձնակատարը մասնավորապես մտահոգված է նախնական կալանքի տակ գտնվող յոթ անձանց, այդ թվում՝ երեք պատգամավորների և Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահական ընտրարշավի շտաբի պետի առնչությամբ, որոնց բավականին ընդհանրական մեղադրանք է առաջադրված պետական հեղաշրջում (իշխանության բռնի գավթում, Քրեական օրենսգրքի Հոդված 300) կազմակերպելու համար: Հանձնակատարի մտահոգությունն էլ ավելի է սրել այն փաստը, որ բոլորովին վերջերս՝ 2008թ. սեպտեմբերին, այդ գործերից մի քանիսի առնչությամբ համապատասխան դատարանը երկու ամսով երկարացրել է նախնական կալանքի ժամկետը:

Տասնինը անձանց դեմ հարուցված դատական գործերը հիմնված են եղել բացառապես ոստիկանական ցուցմունքների վրա: Հանձնակատարի գրուցակիցներից շատերի կարծիքով խախտվել է դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքը: Նրանց համար խնդրահարույց է եղել նաև որոշ դեպքերում արագացված դատավարության պրակտիկան, որի շրջանակներում մի քանի դատավարությունների տևողությունը երեսուն րոպեից պակաս է եղել: Մինչ օրս մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ իրավապահ մարմինների որևէ ներկայացուցչի մեղադրանք չի առաջադրվել:

Հանձնակատարը ցանկանում է ընդգծել, որ բացառապես քաղաքական համոզմունքների կամ ոչ բռնի գործողությունների հիման վրա ազատագրվման կամ դատապարտման պրակտիկայի շարունակումը, նույնիսկ ազատագրվում չնախատեսող պատժաչափերի դեպքում, անընդունելի է:

4. Հանձնակատարը համամիտ է ԵԽՆԿ-ի նախագահ պրն. Ղե Պուչի 2008թ. հուլիսի 29-ի հետևյալ հայտարարությանը. «Պետք է հստակ լինի, որ [մարտի 1-ի] իրադարձությունների առնչությամբ ձերբակալությունները, բացառությամբ ծանր հանցագործություններ կատարածների դեպքում, Վեհաժողովի տեսանկյունից անընդունելի է: Հետևաբար, իշխանություններին կոչ են անում հնարավորինս արագ կերպով ազատ արձակել այդ մարդկանց»:

#### **2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների հետաքննությունը**

5. Հայաստանի կառավարությունը Հանձնակատարի միջնորդությամբ հայցել է միջազգային փորձագետի աջակցությունը հետաքննության ազգային հանձնաժողով ձևավորելու և դրա մանդատը մշակելու համար: Հանձնակատարը ողջունում է այս առումով կառավարության պրոակտիվ մոտեցումը:

2008թ. հուլիսին Հանձնակատարի Հայաստան կատարած առաքելության այցի ընթացքում քննարկումների հիման վրա՝ փորձագետը (ով մասնակցել է այդ այցին) պատրաստել է հուշագիր, որը ներկայացնում է ինչպես հետաքննություն իրականացնող փորձագիտական հանձնաժողովի ձևավորման ընթացակարգին, այնպես էլ՝ կոմիտեի գործունեության էական կողմին (այն է՝ հետաքննության շրջանակը, մանդատը և այլն) առնչվող

հիմնական հարցադրումները և խնդիրները՝ երաշխավորելու դրանց համապատասխանությունը ԵՄԽԿ-ի բանաձևի պահանջներին և Հանձնակատարի հանձնարարականին: Փորձագետը հուշագիրը Հայաստանի կառավարությանն է հանձնել 2008թ. օգոստոսի 21-ին:

Հայաստանի իշխանությունները արագ կերպով պատասխանել են՝ մշակելով նախագահական հրամանագրի նախագիծ, որը նախատեսում է փորձագիտական խմբի ձևավորումը՝ 2008թ. մարտի 1-ի և 2-ի իրադարձությունների փաստերի հայտնաբերման նպատակով: Այնուամենայնիվ, հետագա ջանքեր են հարկավոր համալրելու այդ հրամանագիրը, որը հիմք կծառայի փորձագիտական խմբի աշխատանքի համար: Բացի այդ, լիակատար ներառական և համապարփակ խորհրդատվական գործընթաց է անհրաժեշտ՝ երաշխավորելու խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմության ընդհանուր աջակցությունը և ներգրավվածությունը:

6. Հանձնակատարի գրասենյակը և փորձագետը ներգրավված են Հայաստանի կառավարության հետ փորձագիտական խմբին վերաբերող ընթացակարգային և ըստ էության խնդիրներին վերաբերող շարունակական երկխոսության մեջ: Շատ կարևոր է, որ փորձագիտական խմբի զեկույցը, օրինակ, հրապարակվի և մատչելի լինի երկրի բնակչությանը:
7. Հանձնակատարի 2008թ. հուլիսի առաքելությունից ի վեր Հայաստանի իշխանությունների ջանքերը պետք է գնահատվեն որպես դրական քայլեր: Հանձնակատարն առաջարկում է շարունակել ջանքերը միջազգային փորձագետի խորհուրդների ներքո՝ երաշխավորելու այս գործընթացի հաջողությունը: Համապարփակ, անկախ, անկողմնակալ, թափանցիկ և Հայաստանի բնակչության կողմից արժանահավատ համարվող հետաքննություն վարելու նպատակ ունեցող փորձագիտական խմբի ձևավորումը կարծես այլևս իրականանալի խնդիր է: Հանձնակատարը հույս է հայտնում, որ այս հնարավորությունը կգնահատվի, և կշարունակվի բոլոր ներգրավված կողմերի կառուցողական մասնակցությունը: